Արձանագրություն N 5
ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 մայիսի 2019թ.
ժամը 11:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գ. Մարտիրոսյանը

անդամներ՝ Ռ. Հարությունյանը, Դ. Դալլաքյանը

քարտուղար՝ Ա. Մկրտչյան

բացակայում էր անդամ՝ Մ. Ստեփանյանը

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին
(Գ. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

1.1 ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնման գործընթացը 26.03.2019թ. համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 51-րդ հոդվածի 1-ին մասի կասեցվել է, քանի որ Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից 25.03.2019թ. ներկայացվել է բողոք, որի մասին 26.03.2019թ. հրապարակվել է gnumner.am կայքում:

1.2 22.05.2019թ.-ին ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը շարունակում է գնման գործընթացը, քանի որ վերոնշյալ բողոքի մասով կայացվել է որոշում և այն հրապարակվել է 21.03.2019թ.:

1.3 Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված բողոքը մերժվել է:

1.4 21.03.2019թ. ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 2-րդ մասի 1.1 կետի բ ենթակետով Ա/Ձ Մանվել Ջալավյանը ճանաչվել էր 1-ին չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից և նրան ծանուցվել էր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին, որոնք մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել էին, իսկ 1.2 կետի համաձայն հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

1.5 Հրավերով սահմանված ժամկետում գնահատման թերթիկները տրամադրվել են հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետով սահմանված ժամկետում 26.03.2019թ. ստացվել կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված 21.03.2019թ. ուղարկված հարցման պատասխանը, ըստ որի մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.6 Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեցին Ա/Ձ Մանվել Ջալավյանի կողմից ներկայացված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և արձանագրվեց, որ դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին
(Գ. Մարտիրոսյան)

1. Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձանաժողովը որոշեց.

1.1 Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ Մանվել Ջալավյանին:

1.2 Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջների և ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մարտիրոսյան

անդամներ՝ _____ Դ. Դալլաքյան

_____ Ռ. Հարությունյան

քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան